ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 1/5

ք. Երևան 26 սեպտեմբերի 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՈՒ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ հոդվածի 5-րդ ու ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հասարակայնության հետ կապեր» մասնագիտության «Ռազմավարական հաղորդակցություն» (850 000 ՀՀ դրամ) ու «Սոցիալական աշխատանք» մասնագիտության «Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» (700 000 ՀՀ դրամ) մագիստրոսական կրթական նոր ծրագրերի վարձավճարները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ